

FORPOSTART PRODUCTION-ը հայտնում է, որ այսօր՝ մարտի 31-ին, Global Communications ընկերության կողմից ստացվել է պաշտոնական նամակ-պարզաբանում՝ Էրոս Ռամագոտտիի՝ Էստոնիայում, Ռուսաստանում և Հայաստանում կայանալիք համերգային շոուների չեղարկման վերաբերյալ: Ինչպես ասվում է նամակում՝ Էրոս Ռամագոտտին խախտել է Global Communications ընկերության և RADIORAMA S.R.L. ընկերության միջև կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Հարկ ենք համարում պարզաբանել, որ Էրոս Ռամագոտտիի Perfetto համերգային շրջագայության շրջանակներում Global Communications ընկերության կողմից կնքվել են երկու պայմանագրեր՝ Էրոս Ռամագոտտիի պրոդյուսերական ընկերության՝ Trident Music S.R.L.-ի և Էրոս Ռամագոտտի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք ունեցող RADIORAMA S.R.L.-ի հետ: Նշված պայմանագրերի հիման վրա Global Communications-ի կողմից կնքվել է գործակալական պայմանագիր FORPOSTART PRODUCTION-ի հետ՝ արտիստի երևանյան համերգային ծրագիրը կազմակերպելու նպատակով, որի համաձայն FORPOSTART PRODUCTION-ը հանդիսանում է Երևանում Էրոս Ռամագոտտիի համերգի կազմակերպման գործընթացի տեխնիկական **Կատարողը**, իսկ Global Communications-ը՝ ի դեմս գլխավոր տնօրեն Անդրեյ Ագապովի, **Պատվիրատուն**: Այս գործընթացում ներգրավված է նաև FORPOSTART PRODUCTION-ի երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար» ընկերությունը՝ որպես ծառայություն մատուցող ենթագործակալ:

Ստորև ներկայացնում ենք Global Communications-ի կողմից ստացված պաշտոնական նամակի թարգմանությունը:

*«Տեղեկացնում ենք, որ Էրոս Ռամագոտտին խախտել է Global Communications ընկերության և RADIORAMA S.R.L. ընկերության միջև կնքված պայմանագրով իր ստանձնած պարտավորությունները՝ Ռուսաստանում, Էստոնիայում և Հայաստանում Perfetto համերգային շրջագայության անցկացման մասով, և Վիլնյուսի համերգից հետո Տալլինում շոու անցկացնելու փոխարեն մեկնել է Իտալիա:*

*Global Communications ընկերությունն իր կողմից պատշաճ կարգով կատարում է RADIORAMA S.R.L. ընկերության հետ կնքված պայմանագրային պարտավորությունները, այդ թվում և՛ ֆինանսական:*

*Global Communications ընկերությունը RADIORAMA S.R.L.-ից չի ստացել ծանուցում պայմանագրով նախատեսված համերգները Արտիստի կողմից չեղարկելու մասին: Այս պահին RADIORAMA S.R.L. ընկերության հետ պայմանագիրը համարվում է կնքված և կատարվում է Global Communications կողմից:*

*Գիտակցելով, որ Արտիստն առանց որևէ մեկնաբանության և բացատրության չի ներկայացել շրջագայության մի համերգին, խնդրում ենք ձեզ դադարեցնել Էրոս Ռամագոտտի՝ ս/թ ապրիլի 26-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում նախատեսված համերգի տոմսերի վաճառքը:*

*Global Communications ընկերությունը պարտավորվում է դատական կարգով պահանջել՝ Էրոս Ռամագոտտի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք ունեցող RADIORAMA S.R.L.-ի կողմից իր պայմանագրային պարտավորությունների չկատարման արդյունքում պատճառված բոլոր վնասների փոխհատուցում:*

*Հարգանքով,*

*Գլխավոր տնօրեն*

*Ա.Ն. Ազապով»*

Հարկ ենք համարում նշել, որ չնայած Global Communications-ի կողմից համերգային ծրագրի չեղարկման վերաբերյալ պաշտոնական գրությունը ստացվել է միայն այսօր, մենք արդեն դադարեցրել էինք համերգի տոմսերի վաճառքը:

Այս պահին Global Communications ընկերության և FORPOSTART PRODUCTION-ի միջև ընթանում են բանակցություններ, որոնց նպատակն է հնարավորինս արագ գալ երկուստեք ընդունելի համաձայնության և ելքեր գտնել ստեղծված իրավիճակից:

Այնուամենայնիվ, սա ժամանակատար և աշխատատար գործընթաց է: Պատվիրատուն պարտավորվում է փոխհատուցել համերգային ծրագրերի չեղարկման արդյունքում պատճառված բոլոր վնասները: Իսկ FORPOSTART PRODUCTION-ը և նրա երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար» ընկերությունն իրենց հերթին պարտավորվում են փոխհատուցել չեղյալ հայտարարված համերգային ծրագրի տոմսերի ետ վերադարձի դիմաց դրամական միջոցները՝ Global Communications-ի կողմից իրենց կրած վնասների փոխհատուցումը ստանալուն պես: Ինչպես նշված է Պատվիրատուի պաշտոնական նամակում, վերջինս պատրաստվում է դատական գործընթաց սկսել իրենց պայմանագրային պարտավորությունները չկատարած Trident Music S.R.L.-ի դեմ՝ որպես Արտիստի պրոդյուսերական ընկերություն, որն անմիջականորեն պատասխանատու է ֆինանսական պարտավորությունների մասով և RADIORAMA S.R.L.-ի դեմ՝ որպես Էրոս Ռամագոտտի ծառայությունների մատուցման բացառիկ իրավունք ունեցող ընկերություն:

Սա նաև մեր կազմակերպությունների գործարար համբավի և բարի անվան պաշտպանության խնդիր է:

FORPOSTART PRODUCTION-ը և նրա երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար» ընկերությունը հայտարարում են, որ միջոցառման տոմսերի իրացմամբ զբաղվող տոմսարկղերը և գործակալները **չեն կրում** տոմսերի ետ վերադարձի դիմաց դրամական փոխհատուցման կամ որևէ այլ վնասի հատուցման պատասխանատվություն: Տոմսերի դիմաց դրամական փոխհատուցումները կկատարվեն FORPOSTART PRODUCTION-ի և նրա երևանյան ներկայացուցիչ «Շոուսթար» ընկերության կողմից:

Եվս մեկ անգամ խնդրում ենք համերգային ծրագրի տոմսեր ձեռք բերած բոլոր անձանց անվնաս և ամբողջական պահպանել տոմսերը՝ դրանց ետ վերադարձման համար: Հետևեք մեր պաշտոնական կայքին՝ տոմսերի ետ վերադարձման գործընթացի ժամկետների և պայմանների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

FORPOSTART PRODUCTION-ը հայցում է բոլորի ներողամտությունը ստեղծված իրավիճակի և պատճառված անհարմարությունների կապակցությամբ:

Ֆորպոստարտ Պրոդաքշըն ընկերության գլխավոր տնօրեն

Զատա Մխեյան